ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N388-Ա
« 04 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ

ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանին 2024 թվականի դեկտեմբերի 4-ին գործուղել ք. Երևան, (Կառավարական տուն, 3-րդ մասնաշենքի 1-ին հարկ) ՀՀ ՏԿԵՆ նիստերի դահլիճ, «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2024 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գլխավոր հաշվապահին՝ Արսեն Խաչատրյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս) կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներքին գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X _____

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Երևան